ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արփի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Բերդաշեն, +37499757182, arpi.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 46-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արփի համայնքի 2020 թվականի բյուջետային գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծել բյուջեի նախագծի մշակման աշխատանքները համակարգող խումբ և հաստատել խմբի անհատական կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արփի համայնքի զարգացման հնգամյա ծրագրին համապատասխան 2020 թվականի համայնքային բյուջեի նախագծի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՂԱՐԻԲՅԱՆ**

2019թվական սեպտեմբերի 27
գ.Բերդաշեն